Norwegian Ministry of Foreign Affairs

Մասնակցային և ներառական գործընթացները համայնքի զարգացման համատեքստում դասընթաց

Թեմա՝ Մասնակցային հետազոտություն, կարևորությունը համայնքային պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում

Դասընթացավար՝ Անուն Ազգանուն,
ՄԱԶԾ փորձագետ

«Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:

Մասնակցային հետազոտություն

Մասնակցային հետազոտությունը հետազոտություն է ոչ թե մարդկանց մասին, այլ մարդկանց հետ:

Հետազոտվողը (հարցվողը) ընդգրկված է հետազոտության բոլոր փուլերում:

Մասնակցային հետազոտության պարագայում բնակիչներն են որոշում, թե ինչպես են լուծվելու խնդիրները:

Մասնակցային հետազոտության երեք հիմնական բաղադրիչներն են

Մասնակցություն՝ ի նպաստ զարգացման

Սովորել բնակիչների հետ միասին

Գործողություն և փոփոխություն

Մասնակցային հետազոտության մեթոդները

- Քարտեզագրում
- Հիմնախնդիրների ծառ
- Ֆոկուս-խմբային քննարկումներ
- Ֆոտոձայն
- Անհատական հարցազրույցներ
- Հարցում
- Մտագրոհ

Քարտեզագրում

Քարտեզագրումը արդյունավետ մեթոդ է բացահայտելու, թե ինչպես են բնակիչները տեսնում իրենց իսկ համայնքը:

Սա լավ միջոց է հավաքելու և ներկայացնելու համայնքի յուրահատկությունները, հասկանալու բնակիչների տարբեր ընկալումները և խրախուսելու բանավեճ, որը հիմք է մասնակցային պլանավորման համար:

Խմբային քարտեզագրման ընթացքը

Նպատակ

Մասնակիցներ

Տեղ և միջոցներ

Քարտեզագրում

Քննարկում

Պլանավորում

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԻՐԱՌՈՒՄԸ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ/ԽՆԴԻՐՆԵՐԻ/ԿԱՐԻՔՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ) ՔԱՐՏԵԶ

ՎՏԱՆԳՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ

ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԾԱՌ



Ֆոկուս-խմբային քննարկումների պահանջները

Մասնակիցների թիվը՝ 6-15

Խմբի միատարրությունը

Մոդերատորի և ֆասիլիտատորի դերը

Տևողությունը՝ 40-90 րոպե

Ֆոկուս-խմբերի քանակը (առնվազն 3)

Սովորաբար ոչ ավելի, քան 10 հարց

Ֆոտոձայն

Մասնակիցներին հնարավորություն է տրվում փաստագրելու իրենց փորձառությունը/խնդիրները լուսանկարչության միջոցով:

Ֆոտոձայնային նախագծերը սովորաբար ներառում են մասնակիցների լուսանկարները, որոնք արտացոլում են իրենց տեսակետները որոշակի հարցի վերաբերյալ, որին հաջորդում են պատկերների վերաբերյալ խմբային քննարկումներ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Հարցազրույցի մեթոդը դասվում է որակական մեթոդների շարքին և ենթադրում է որոշակի պլանով անցկացվող զրույց:

Հարցազրույցի ժամանակ կարևոր է հետազոտողի անմիջական ու ազատ շփումը հարցվողի հետ, որի շնորհիվ բացահայտվում է հարցվողի դիրքորոշումը ուսումնասիրվող երևույթի նկատմամբ:

ՀԱՐՑՈՒՄ, ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԿԱԶՄՈՒՄ

Հարցաթերթիկներ կազմելիս՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ

- հարցերը լինեն հստակ ու չլինեն երկիմաստ
- տրվող հարցերը լինեն սեղմ ձևակերպված և նպատակաուղղված
- հնարավոր լինի հարցերին պատասխանել «այո» կամ «ոչ» տարբերակով, կամ համեմատական (5 կամ 10 միավորից բաղկացած) սանդղակի միջոցով
- հարցաթերթիկը լինի հնարավորինս հակիրճ, և մեկնաբանությունների ու առաջարկությունների համար առանձին տեղ հատկացված լինի

ՀԱՐՑԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԲԱՑ ՀԱՐՑ

Սա այն հարցն է, որին հարցվողը պետք է պատասխանի իր բառերով, ինքնուրույն: Պատասխանի համար հատկացվում է բավականին տարածություն, որպեսզի հարցվողը հանգիստ արտահայտի իր մտքերը:

ՓԱԿ ՀԱՐՑ

Սա այն հարցն է, որին պատասխանելու համար հարցվողը պետք է ընտրի առաջարկված տարբերակներից որևէ մեկը:

ԿԻՍԱՓԱԿ ՀԱՐՑ

Սա այն հարցն է, որին պատասխանելու համար հարցվողը կարող է ընտրել առաջարկված տարբերակներից որևէ մեկը կամ որպես այլընտրանք կարող է ավելացնել ինչ-որ մի առաջարկ, որը նշված չի հարցաթերթիկում:

Առաջնահերթությունների Մտագրոհ

	Մոտ ապագայում	Ավելի ուշ
Մենք կարող ենք ինքնուրույն իրագործել		
Մենք կարող ենք իրագործել, բայց աջակցության կարիք ունենք		
Մենք կարող ենք իրագործել, բայց գումարի կարիք ունենք		
Մենք կարող ենք իրագործել՝ համագործակցելով իշխանության ներկայացուցիչների հետ		
Մենք չենք կարող իրագործել, բայց կարող ենք խնդրել իշխանության ներկայացուցիչներին կամ այլ գործակալություններին, կազմակերպություններին, որպեսզի օգնեն մեզ		
Այլ		

Գենդերային և սոցիալական ներառման վերլուծություն

Գենդերային և սոցիալական ներառման վերլուծության էությունը, շրջանակները և իրականացման ձևերը:

Կապը՝ համայնքի բյուջեի, ՏԱՊ-ի և հնգամյա զարգացման ծրագրի հետ:

Ի՞նչ է գենդերային և սոցիալական ներառման վերլուծությունը և ինչու է այն անհրաժեշտ

Ցանկացած ոլորտում լավ ծրագիր մշակելու համար պետք է հստակ իմանալ՝

- ովքեր են ապրում համայնքում,
- ինչով է զբաղված համայնքի բնակչությունը,
- որքանով են կանայք և տղամարդիկ, ինչպես նաև՝ խոցելի խմբերի ներկայացուցիչները, ներգրավված հասարակական կյանքում:

Ծրագրեր մշակողները պետք է տեղյակ լինեն՝

- տղաների ու աղջիկների, տղամարդկանց ու կանանց, ինչպես նաև խոցելի խմբերի հոգսերին ու կարիքներին,
- նաև այն խնդիրներին, որոնց առնչվում են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ:

Պետք է հավաքել ու վերլուծել որոշակի տվյալներ, որոնք հետագայում կօգտագործվեն՝

- հիմնական խնդիրները մատնանշելու ու դրանց հնարավոր լուծումները գտնելու համար
- համայնքի առաջնահերթությունները որոշելու համար
- թիրախային ծրագրեր իրականացնելու և դրանց իրականացումը գնահատելու նպատակով

Անհրաժեշտ ցուցանիշներ

- Տարիքային խմբեր
- Սեռային պատկանելիություն
- Կրթական մակարդակ
- Գործունեության տեսակ
- Ամուսնական կարգավիճակ
- Խոցելի խմբերը, ներառյալ՝
  - էթնիկ և կրոնական փոքրամասնություններ,
  - փախստականներ,
  - միածնող ընտանիքներ,
  - գործազուրկներ,
  - աղքատներ,
  - տարեց մարդիկ (հատկապես՝ միայնակ ապրող տարեցներ),
  - հաշմանդամություն ունեցող անձինք:

Համայնքում տիրող իրավիճակի վերլուծություն

- Կանանց և տղամարդկան զբաղվածությունը
- Խոցելի խմբերի զբաղվածությունը (ներառյալ վարձատրվող և չվարձատրվող աշխատանքները)
- Ռեսուրսների տիրապետումը
- Կարիքներների բացահայտումը

Norwegian Ministry
of Foreign Affairs

ՀՀ տարածքային կառավարման եւ
ենթակառուցվածքների նախարարություն

UNDP

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ: